

Ե.ՇԱՀԱԶԻՉ



ՀՈՉԱԿԱՎՈՐ
ԴԵՐԱՍԱՆ

ՊԵՏՐՈՍ
ԱՂԱՄՅԱՆԸ

(ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ)

1882 թվի մալիսի վերջերին և հոնիսի սկզբներին հաջողությամբ վերջացնելով իմ ավարտական քննությունները «Լազարյան ձեմարանի արևելյան լեզվաց լիկեոնում» և սահմանված վկայագիրը ստանալով, ես պատրաստություններ տեսա հայրենիք վերադառնալու, որտեղ մայրս, աչքը ճանապարհին, իմ վերադարձին էր սպասում:

Ես որոշել էի մնալ հայրենիքում և ուսուցչության պաշտոն վարել մեր հոգևոր դրություններից մեկում կամ Գևորգյան հոգևոր ձեմարանում: Նախ քան հայրենիք ճանապարհվելը, հորեղբորս խորհրդով, ես հարկ համարեցի այցելության գնալ երկու նշանավոր անձանց և նրանց խորհուրդները լսել իմ այս որոշման մասին: Դրանցից առաջինը Լազարյան ձեմարանի տեսուչ Գևորգ Քանանյանն էր, իսկ երկրորդը՝ Կարապետ Եղյանը, որը այդ ժամանակ Մոսկվայումն էր գտնվում: Քանանյանը խորհուրդ չտվեց, իսկ Եղյանը, ընդհակառակը, և խորհուրդ տվեց, և՛ գովեց իմ որոշումը:

Մոսկվայում ես ապրել էի 13 տարի, ու թեև ընտելացել էի այդ մեծ քաղաքի կյանքին ու հավանել, բայց ուշ ու միտքս հայրենիքս էր:

Դե՛հ, հայրենիքը քաղցր է լինում... Ու ես հայրենիք վերադարձա:

Երեք ամիս ապրեցի հայրենիքում — մերթ երևանում, որտեղ սնվել ու մեծացել էի, մերթ Աշտարակում, իմ հորենական գյուղում, մերթ Ղզրթամուր (Ոսկեվազ) գյու-

ղում, ուր բժիշկ մեծ եղբայրս ընտանիքով հանգստանալու էր եկել իր աներոջ մոտ, որն այդ գյուղի կալվածատերն էր:

Այդ երեք ամսվա ընթացքում ես ամեն միջոց գործ դրի, բայց ինձ չհաջողվեց իմ մասնագիտության համապատասխան պաշտոն գտնել մեր դպրոցներում և ստիպված եղա վերստին օտարություն դիմել, ընդունելով հայտնի մանկավարժ Առաքել Բահատրյանցի հրավերը՝ Նոր-Նախիջևան տեղափոխվելու և Բեսարաբիայի ու Նոր-Նախիջևանի թեմական դպրոցում ուսուցչություն անելու մասին, հուսալով, որ հաջորդ տարում ինձ կհաջողվի նորից հայրենիք վերադառնալ:

Ես Նոր-Նախիջևան գնացի, ինչպես ասում են, հայրենիքիս կարոտը սրտումս: Մորս էլ հետս տարա, որպեսզի օտարության մեջ կարոտս գոնե նրանից առնեմ: Բայց հանգամանքների բերմամբ մի տարին դարձավ 40 տարի, և երբ հայրենիք վերադարձա, խեղճ, բազմաշարժար մորս արևտեղ թողի...

Սեպտեմբերի 22-ին Ռուստով հասնելով մենք իջևանեցինք «Ճրանսիա» հյուրանոցում, որը քաղաքի կենտրոնումն էր գտնվում և վայելուչ հյուրանոց էր համարվում: Այստեղ, հյուրանոցում նկատեցի, որ սանդուխթի գլխին, աչքի զարնոդ տնդում, ուսերեն լեզվով, խոշորատիպ մի աֆիշ էր կախված, որով ծանուցվում էր, թե այս ինչ օրը Նոր-Նախիջևանի թատրոնում տեղի պիտի ունենա ներկայացում՝ հուշակավոր

հայ դերասան Պետրոս Ադամյանի մասնակցութեամբ:

Ես անշափ ուրախացա, քանի որ մեր լրագրերում շատ էի կարդացել ու շատ բան էլ լսել մեր այդ հռչակավոր դերասանի մասին, բայց երբեք չէի տեսել նրան ու նրա խաղը. ես մտածեցի, որ նա անկասկած Նոր-Նախիջևան եկած պիտի լիներ Թիֆլիսից և այն էլ ո՛չ մի ներկայացման համար միայն, ուստի մտքումս դրի անպայման տեսնել նրա խաղը ու ծանոթանալ հետը:

Ռոստով ժամանելու առաջին օրերը շատ էի զբաղված և հնարավորություն չունեի բնակարան փնտռելու, դրա համար էլ մի շաբաթ շարունակ հյուրանոցում մնացի. անավտոները քնում էի Նոր-Նախիջևան ու երեկոները ուշ վերադառնում՝ մորս հետ միասին ճաշելու համար, որը ուսերեն չիմանալու պատճառով առանց ինձ շատ նեղություն էր քաշում: Մի շաբաթից հետո վերջապես կարողացա մի հարմար բնակարան գտնել և Նոր-Նախիջևան տեղափոխվել, որ հնարավորություն տվեց ինձ թե՛ ազատ շունչ քաշելու և թե՛ ուրիշ բաների մասին մտածելու— և առաջին հերթին Ադամյանի ու Ռաֆայել Պատկանյանի հետ ծանոթանալու մասին:

Թեմական դպրոցի ուսուցիչներից մեկը, որը մասնակցում էր ներկայացումներին, ինձ հաղորդեց Ադամյանին Նոր-Նախիջևան հրավիրելու մանրամասնությունների մասին և այն մասին, որ ներկայացման համար պատրաստվում է «Համլետ»-ը, Ադամյանի սիրած պիեսը: Նա ի միջի այլոց հայտնեց նաև, որ Ադամյանը արդեն լսել է իմ մասին և վամենում է ծանոթանալ ինձ հետ ու «Համլետ» պիեսում մի դեր առաջարկել, որի համար տակավին կարող անձ չէր գտել:

Ես պատասխանեցի, որ բեմ դուրս գալու շնորհք չունեմ, բայց սիրով կուզեի ծանոթանալ մեր հռչակավոր դերասանի հետ:

Մի որոշ ժամանակ անց կայացավ «Համլետ»-ի ներկայացումը և ես տեսա նրան... Իմ վրա, խոստովանում եմ, թե՛ ինքը և թե՛ իր խաղը ապշեցուցիչ տպավորություն թողին... հայ լեզուն նրա բերնում քաղցր երաժշտականություն էր հնչում, զարմանալի ներդաշնակություն կար նրա կեցվածքի ու խաղի միջև և հոյակապորեն էր մեկնաբանում նա պիեսի հեղինակի մտահղացումները:

Համլետի դերում ես տեսել էի նաև Սամոյլովին, Սալվինիին, Ռոսիին, բայց այդպիսի նրբություն նրանց խաղի մեջ չկար, չէի տեսել:

Չհամբերեցի, վազեցի կուլիսների ետևը և նրա հետ ծանոթանալով իմ հրձվանքն արտահայտեցի իր ճշմարտացի ու հոյակապ խաղի համար:

— Դուք Շահազի՞զն եք, նոր եկած ուսուցիչը,— հարցրեց նա,— շնորհակալ եմ ձեր լավ կարծիքի համար. ես ուզում էի տեսնել ձեզ և խոսել ինձ համար կարևոր մի գործի մասին, բայց այժմ ժամանակ չկա, խնդրում եմ հաճեք շնորհ բերել իմ մոտ, Ռոստով,— այս ասելով նա ինձ տվեց իր այցետոմսը, որի վրա նշանակված էր հասցեն:

Ադամյանի հետ Օֆեխայի դերը խաղում էր ոտից-գլուխ սպիտակ հագած մի սիրունիկ հայ աղջիկ, անմեղ, միամիտ մի արարած: Ադամյանը թախծոտ ձայնով ասում էր նրան. «գնա՛ կուսանոց, մտի՛ր կուսանոց», իսկ նա էլ երկչուտ կերպով հեռանում էր նրանից, կարծես հզոր արծվի բերնից խուսափած թռչնակ լիներ: Ադամյանը նրան այնպես էր նախապատրաստել, սովորեցրել, և նա իր դերը խաղում էր այնքան գեղեցիկ, այնքան բնական, որ կարծես թե հենց այդ դերի համար ստեղծված լիներ: Իզուր չէր, որ Ռաֆայել Պատկանյանը այդ աղջկա անունը Օֆեխա էր դրել ու այդպես էլ կոչում էր նրան, շնայած նրա իսկական անունը Հեղինե էր (Հեղինե Սալտիկյան), Հեղինեն պատմում էր, որ Ադամյանի հետ բեմի վրա խաղալու ժամանակ ինքն այնքան էր տարվում նրա խաղով, որ հաճախ մոռանում էր իր դերը, իր ասելիք բառերը, և Ադամյանը ստիպված էր լինում աչքով-ունքով հասկացնել նրան, սթափեցնել, որպեսզի շարունակի իր ասելիքները: Ո՛վ կարող էր գուշակել, որ այդ սիրունիկ, անմեղունակ աղջիկը մի օր իմ հարսնացուն պիտի լիներ:

Ադամյանը իր դերի լինելը, թե չլինելը—ն արտասանելու ժամանակ մի փոքրիկ, փայլուն, աչքի ընկնող դանակ էլ էր պահում ձեռքին, որպես շիճելու նշան: Մյուս Համլետ խաղացողների ձեռքին ես նման բան չէի տեսել և կարծում եմ այդ տեղին էր և ոչ ավելորդ, ինչպես որ կարծողներ կան:

Մի տոն օր էլ ես գնացի Ռոստով, Ադամյանին այցելելու համար, իր հրավերի համաձայն: Նա ապրում էր Շչոլովովի հյուրանոցի ցածի հարկի մի վայելուչ սենյակում: Երբ ներս մտա, տեսա, որ նա թե՛ նախաճաշում էր և թե՛ ձիթեպատուղ էր ուտում: Իսկույն կանչեց սպասավորին ու պատվիրեց սուրճ բերել:

— Ես, գիտեք, շատ եմ սիրում այս պտուղը,— ասաց նա,— մեղ մոտ շատ ընդունված է, և՛ համով է, և՛ սննդարար:

Այժմ եկեք խոսենք ինձ համար կարևոր այն գործի մասին, որի համար խնդրել էի

Ձեզ շնորհ բերել իմ մոտ: Ես մինչև օրս հանդես եմ եկել մեր հայկական փոքրիկ բնամերի վրա ու հայտնի դարձել միայն հայ աշխարհին: Ներկայումս իմ ցանկությունն է հանդես գալ ավելի մեծ բնների վրա ու հայտնի դառնալ նաև ուսս մեծ ազգին, իսկ դրա համար պահանջվում է մերայնոց օգնությունը, ո՛չ այնքան դրամական, որքան բարոյական օգնությունը: Ինձ թվում է, որ ի՞նչ հնարավորություն ստեղծվի իմ մասնակցությանը մեկ-երկու ներկայացում կազմակերպել Մոսկվայում, իմ ցանկությունն էլ կատարված կլինի, մեր ազգն էլ բարոյապես շահած կլինի:

Կարծում եմ, որ ձեր հորեղբայրը, եթե կամենա ու տրամադրված լինի, ի վիճակի կլինի այդ օգնությունը ցույց տալու ինձ. նա, իբրև ուսուցիչ կազարյան ձեմարանի և իբրև անվանի բանաստեղծ, անկասկած մեծ ազդեցություն ունի Մոսկվայի հայ գաղութի ու հայ ուսանողության վրա և կարող է նրանց տրամադրել, որպեսզի նպաստեն իմ ցանկության իրագործմանը:

Արդ, խնդրում եմ ձեզ, գրել ձեր հորեղբորը, հարցնել նրա կարծիքը, և ըստ հնարավորության, աշխատել տրամադրել նրան, իսկ մնացածը ինքն ըստ ինքյան գլուխ կգա:

Ես խոստացա և խոստումս էլ կատարեցի, որքան որ իմ համարձակությունն ու կարողությունն ներում էին:

Եվ այդ բոլորը դրական արդյունք ունեցավ. Ադամյանը ընցա Մոսկվա, սովորեցրեց ուսանողներին ինչ պետք էր և ներկայացրումները կայացան: Մոսկվայից տեղեկություն ստացա, որ տպավորությունը ապշեցուցիչ է եղել. թերթերը մեծ զովեստով էին արտահայտվել տաղանդավոր արվեստագետի մասին, անվանելով նրան մի ձեռք Համլետ, որը աշխարհ էր եկել իրենից առաջ եղած բոլոր «Համլետ»-ների վրա ստվեր նետելու համար:

Այս հաջողության հետևանքով հետագայում կատարվել է նրա և մյուս ցանկությունը — այցելության զնալու անձայրածիր Ռուսաստանի մեծամեծ քաղաքները: Նա գնացել ու վերադարձել էր փառավոր հաղթանակներով, իր հետ բերելով մի ճամբրուկ լի, «ի հիշատակ» ստացված, թանկագին ընծաները: Եթե չլինեին էլ այդ թանկագին ընծաները, որոնք վկայում էին ամեն տեղ նրա փառքով ու պատվով ընդունված լինելու մասին, գոյություն ունի, սակայն, ռուսերեն լեզվով տպագրված մի բրոշյուր ևս, որի ուս հեղինակը անաչառ կերպով նկարագրել է այն փառքն ու պատիվը, որին արժանացել էր Ադամյանը իր այդ շրջագայության ժամանակ: Թե ի՞նչ եղան հետագա-

յում. այդ ընծաները, մեզ ստույգ հայտնի չէ, միայն գիտենք, որ երբ հայվել են նրա գրպաններում պարզվեցրի հետ միասին բերված ուղարկները և նա կարոտ է մնացել հնչուն դրամի, Նոր-Նախիջևանի դրամատրնից ժամանակավորապես վերցրել է 500 ռուբլի դրամ, որպես գրավական թողնելով վերոհիշյալ իրերը: Հետագայում նա այլևս հնարավորություն չի ունեցել որպես գրավական թողնված իր այդ իրերը ետ գնելու ու նրա մահվանից հետո դրանք մնացել են դրամատանը: Դրամատան վարչությունը, անհամար համարելով սովորական եղանակներով հնչուն դրամի վերածելու հույսկավոր Ադամյանի ստացած այդ ընծաները, մնացել էր շվարած և չգիտեր ինչպես փակել նրան պարտք տրված 500 ռուբլու հատիվը: Ահա հենց այդ ժամանակ Նոր-Նախիջևանցի հայտնի փաստաբան Գրիգոր Չախուռչյանը վճարել է հանգուցյալի պարտքը ու դրամատնից ետ վերցրել նրա գրավ դրած իրերը: Մենք լսել էինք, որ Չախուռչյանն այդ իրերը ուղարկել է էջմիածնի թանգարանը, բայց մեր պրպտումներն այս ուղղությունը մինչև օրս էլ դրական ոչ մի արդյունք չեն տվել և չգիտենք թե ի՞նչ եղան ու ո՞րտեղ են գտնվում Ադամյանի նվիր ստացած այդ արժեքավոր իրերը:

Ադամյանի առաջին անգամ Մոսկվա գնալու տարվա գարնան վերջերին ես առիթ ունեցա տեսնվելու հորեղբորս հետ. երբ ես նրան հարցրի Ադամյանի մասին, նա պատասխանեց.

— Այո՛, սիրելի՛ս, դու ճիշտ էիր գրել նրա մասին, Ադամյանն արժանի է այն հարգանքին, որ վայելում է: Նա այցելեց ինձ, ես էլ փոխայցելության զնացի ու իմ գրքերը նվիրեցի նրան, իբրև ամենարժանավորին: Նրան այցելության էին եկել Մոսկվայի ամենահայտնի արվեստագետները ու իրենց այցելումները թողել նրա սեղանի վրա, մի բան, որ նշան է համարվում նրա խաղի բարձր զնահատման:

Ադամյանը, երբ խոսք էր լինում իրեն Նոր-Նախիջևան հրավիրելու մասին, միշտ զանգատվում էր երկու բանի մասին — առաջինը, որ իրեն հասանելիք գումարը տրվում է թղթագրամով և ոչ ոսկեդրամով, երկրորդը, որ ինքը ստիպված է լինում շատ մեծ դժվարին աշխատանք կատարել իր հետ խաղացողներին սովորեցնելու համար:

Սակայն, ես աշխատում էի նրան համոզել, որ այդտեղ ոչ մի շահագործում գոյություն չունի, ինչպես որ ինքն էր կարծում, այլ առաջինը ուղղակի թյուրիմացություն է, իսկ երկրորդը կապված է Ռատերասիրաց

Ընկերութեան նյութականի սղութեան հետ: Արամյանը դեռ չգիտեր, որ Ռուսաստանում թղթադրամը շրջանառութեան մեջ է գտնվում ոսկի ուսուցում հավասար արժեքով, այդ բանը նա իմացել է միայն Պոլիս վերադառնալիս, երբ ուսական թղթադրամի փոխարեն ստացել է նրան հավասարարժեք ոսկի դրամ: Ինչ վերաբերում է Արամյանի կատարած ծանր աշխատանքին, ապա մեզ ստույգ հայտնի է, որ թատերասիրաց Ընկերութունը գիտեր թե ինչքան մեծ աշխատանք է թափում նա իր հետ խաղացողներին սովորեցնելու համար և պատրաստ էր նրա աշխատանքը թեթևացրած լինելու համար մի երկու հմուտ դերասանի ևս հրավիրելու, բայց շունձր դրա համար պահանջվող միջոցները թատերասիրաց Ընկերութունը, նոր կազմակերպված ու հաստատված լինելով, տակալին հազիվ հազ էր կարողանում ծախքը ծախրին հասցնել:

Իսկ որ նրա աշխատանքը տաժանելի էր, այդ բոլորովին ճիշտ էր և ես այդ իմացա հետևյալից. մի կիրակի օր ես ներկա զբոսնում էի նրա մի փոքրիկ, որը կատարվում էր թեմական դպրոցի քննական դահլիճում. բավականին մարդիկ էին հավաքվել: Արամյանը հագել էր իր սովորական զգեստներից մեկը, որը շատ սազական էր նրա նուրբ կազմվածքին ու հասակին. նա լուրջ կերպով կատարում էր իր պարտքը, սովորեցնում էր մեկին, որը պիտի սպասավորի դերը կատարելու ու մի քանի խոսք ասելու: Նա առաջ կարդաց նրա դերին վերաբերող մասը, հետո ցույց տվեց, թե ի՞նչպես պետք է մշտնեի ու ի՞նչպես արտասանել իր դերը. ապա աթոռի վրա նստելով խնդրեց, որ նա ներս մտնի ու խոսի այնպես, ինչպես որ ինքը ներս եկավ ու խոսեց. սիրողը կատարեց նրա պատվերը, բայց շատ անշնորհք ձևով ու եղանակով: Մի քանի անգամ նույնն անելուց և նրան ապարդյուն կրկնել տալուց հետո Արամյանն ասաց.

— Է՛հ, բավական է, հոգնեցանք:

Հավաքված երիտասարդներից մեկը, նկատելով նրա անբավական մնալն ու նեղանալը, ծիծաղելով բացականչեց.

— Է՛հ, ինչ եղել է, որ կնեղանա, խո՛ւմ մեզ համար այս ամենը «էգլենցե» է:

Ես նկատեցի, թե ինչպես Արամյանը կարմրեց ու ապա արտասովալից աչքերով պատասխանեց.

— Բան չունիմ ձեզի ըսելու, այլ միայն կանխո՞ծան, որ ձեզի ալ մեկն այնպես «էգլենդրմիշ»^{*)} ընե, ինչպես որ դուք ինձ «էգլենդրմիշ» կընեք:

*) Զբաղեցնելու

Ապա դառնալով հավաքված մարդկանց ասաց.

— Բարեկամներ, թատրոնը ուրախ ժամանցի տեղ մը չէ, ինչպես որ կկարծեք դուք, այլ սուրբ դպրոց մը, շատ լուրջ տեղ մը, ուր մարդիկ հաճախեն պիտի կյանքը ճանաչելու համար, ուստի և թատրոնի բեմին վերա պիտե՛ս ա՛նպես պիտի ներկայացվի, որ ճշտութեամբ համապատասխանի իրականութեանը, իսկ «էգլենցե»-ով այդ կարևոր նպատակին հասնել կարելի չըլլար:

Ես հասկացա, թե ինչ էր նշանակում ինձ անծանոթ «էգլենցե» բառը և ցավելով թողի դահլիճը: Հետո տեղեկացա, որ փորձն այլևս չի շարունակվել, Արամյանի հոգնած ու հիվանդ լինելու հետևանքով:

Արամյանի ներկայացումները կայանում էին Նոր Նախիջևանում և երբեմն էլ Ռուստովում Հայրապետյանցների ունեցած փայտաշեն թատրոնում: Նոր-Նախիջևանի թատրոնի շենքը հատկապես այդ նպատակի համար կառուցված շենք չէր. նախկինում նա ցորնի շտեմարան էր եղել ու պատկանել էր մասնավոր մարդու, որից գնելով վերածվել էր թատրոնի: Այդ տեղի էր ունեցել 60-ական թվականներին, երբ նոր-Նախիջևանցիների հրավերով Պոլսից պիտի ժամաներ հայտնի Ծասուլաճյանը՝ իր դերասանական խմբով: Հասկանալի պիտի լինի, որ շտեմարանի շենքի վերածումը թատրոնի, կատարված լինելով շտապ հարկավորության դեպքում և ժամանակավորապես, չէր կարող պահանջված հարմարությունն ունենալ թատրոնի համար: Արամյանը ինքն էլ յալ հիշում էր այդ հանգամանքը, քանի որ հիշյալ խմբի անդամներից մեկն էր եղել իր վաղ երիտասարդության տարիքում:

Արամյանի կազմակերպած ներկայացումների ժամանակ, որքան հիշում ենք, Նոր-Նախիջևանում բեմադրվել են հետևյալ թատերական գործերը— «Համլետ», «Երկու քույր», «Ոճրագործի ընտանիքը», «Անսանձի սանձահարումը», «Ուրիել Ակոստա», «Թին», «Դիմակահանդես»: «Համլետ»-ը քանիցս կրկնվել էր, իսկ Եփրայիթի «Արքա Լիր»-ը և «Օթելլո»-ն նրա բեմադրությամբ չենք տեսել, քանի որ Նոր-Նախիջևանում եղած ժամանակը նա դեռ Նոր միայն ուսումնասիրում էր «Արքա Լիրը», «Օթելլո»-ն և մյուսները:

Մենք Արամյանին հիշում ենք Համլետի դերում նաև խառն լեզուներով կազմակերպված ներկայացման մեջ: Ռուստով էր եկել Ֆրանսիացի դերասանների մի խումբ, որը Ֆրանսերեն լեզվով ներկայացումներ էր տալիս: Ահա հենց այստեղ էլ ծանոթանալով Արամյանի հետ, Ֆրանսիացիները հրավիրում են նրան մասնակցել իրենց ներկայացմանը

և հանդես գալ Համլետի դերում: Աղամյանը համաձայնում է իր դերը միայն հայերեն լեզվով խաղալու պայմանով: Եվ այդպես էլ հիշված էր աֆիշում:

Մենք մեր թատերասերների հետ միասին գնացինք Ռոստով այդ ներկայացումը դիտելու համար: Թեև Նոր-Նախիջևանում և Ռոստովում ֆրանսերեն լեզուն հասկացող շատ քիչ մարդիկ կային, բայց այդ օրը հեռաքրքրությունը շատերին էր դրդել թատրոն շտապելու, այնպես որ թատրոնը ծայրն էր ծայր լինելու:

Ճիշտ է, սկզբում երբ վարագույրը բարձրացավ և լավիցին հայերեն ու ֆրանսերեն լեզուների հնչյունները, այստեղից ու այնտեղից ծիծաղ ու փոթկոցներ սկսվեցին, բայց հետո, երբ Աղամյանը հետզհետե իր խաղով բոլորի ուշադրությունն իր վրա բեկեց, դահիճում այնպիսի լուսություն տիրեց, որ ձանձի թռչելն անգամ կղզացվեր: Այդ նշան էր, որ հանդիսականները տարվել էին արդեն մեծ արվեստագետի խաղով: Այնուհետև նրա ամեն մի մենախոսությունը արդեն բուն օվացիա էր առաջացնում, որ հետզհետե ավելի ու ավելի որոտընդոտ էր դառնում: Երբ վարագույրը վերջին անգամ իջավ, ամենքն էլ տեղերից վեր կացան ու խոնվեցին բեմի առջ, կամենալով մի անգամ ևս տեսնել նրան. վարագույրը վերստին բարձրացավ և Աղամյանը երևալ ֆրանսիացի դերասաններով շրջապատված, որոնք բրավո, վիվատ կոչելով ծափահարում էին տաղանդավոր դերասանին: Մենք դուրս եկանք նրան ընդառաջ և ուղեկցեցինք մինչև իր բնակարանը:

Նոր-Նախիջևանում, պայմանագրով սահմանված ներկայացումները տալուց, Մոսկվա մեկնելուց և Ռուսաստանի մեծ քաղաքները շրջապահելուց հետո Աղամյանը մեկ-երկու անգամ ևս այցելեց Նոր-Նախիջևան ու Ռոստով, որտեղ դրամի կարիք զգալով երկու ներկայացում կազմակերպեց իր նախկին ընկերների մասնակցությամբ. այդ ներկայացումներից մեկը լավ մուտք ունեցավ, իսկ մյուսի մուտքը չնչին էր: Թե ինչ պիեսներ բեմադրվեցին չենք հիշում, բայց կարծում ենք, որ այն պիեսը, որի բեմադրումը չնչին մուտք բերեց, պիեսը է որ դարձյալ «Համլետ»-ը եղած լինի: Դա շատ տարօրինակ էր, որովհետև հենց «Համլետ»-ի բեմադրությունն էր, որ միշտ լիակատար մուտք էր բեցում... Սակայն, այս հանգամանքը շագղեց նրա վրա և նա, ընդհակառակը, շատ ուրախ էր տրամադրված. ասում, խոսում, ծիծաղում, կատակներ էր անում: Այդ օրերին նա լուր էր ստացել Ռուսաստանի կառավարությունից, որ ուսմանական թագավորն

ու թագուհին հրավիրում են նրան Ռուսաստան:

Ըստ սովորության, մենք թատրոնից դուրս դալով ցանկացանք նրան ուղեկցել մինչև իր բնակարանը. վեց-յոթ հոգի էինք. նա մեզ ընթրիքի հրավիրեց իրեն լավ ծանոթ խոսալացու ճաշարանը: Մենք չեմ ու չում արինք, պատճառարանելով, որ արդեն ուշ է. որ մենք պետք է Նոր-Նախիջևան վերադառնանք, որ չենք ուզում նրան ավելորդ ծախսեր պատճառել: Սակայն, մեր պատճառաբանություններից ոչ մեկն էլ նա չընդունեց:

— Ով չի՛ գա, նա ինձ բարեկամ չէ,— ասաց նա կտրակահնայես:

Մենք ստիպված եղանք գնալու:

Խոսալացին մեզ ընդունեց պատվով: Աղամյանը զարեջուր ու կովկասյան խորոված պատվիրեց. մենք նվառեցինք, որ նա սահուն խոսում է իտալերեն: Շատ ուրախ ժամանակ անցկացրինք: Ան, փրփրանք գրեջրով լիքը քաժակիցը բարձրացնելով խմեցինք նրա քաղցր կենացը ու շնորհավորեցինք Ռուսիայից հրավեր ստացած լիներու առթիվ: Հետագայում խմացանք, որ Պոլիս վերադառնալով նա այլևս Ռուսիայի չէր գնացել մեզ անհայտ պատճառով:

Աղամյանը սիրում էր Նոր-Նախիջևանը և մինչև իսկ նրա ցորենի շտեմարան թատրոնը, որովհետև այդ բոլորը նրան հիշեցնում էր իր վաղ երիտասարդությունը, երբ նա Ցասուլաճյանի խմբի հետ առաջին անգամ եկել էր Նոր-Նախիջևան ու մնացել այդտեղ մի քամբողջ թատերական սեզոն: Այն ժամանակվա Նոր-Նախիջևանի և այդտեղ իրենց վարած անհոգ կյանքի մասին նա շատ հիշողություններ էր պահել: Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել նրա այդ հիշողություններից մեկը, որը դեռ չենք մոռացել:

Ես ու Թըրջանը ապրում էինք մի սենյակում,— պատմում էր Աղամյանը:— Մի օր դերեր սերտելով շատ զբաղվեցինք ու տնից ուշ դուրս եկանք. երեկոյան ժամը 10—11 կլիներ. սոված էինք, ուզում էինք ուտելու մի բան գտնել, բայց ամեն տեղ արդեն փակ էր, ոչ հացի փուռ և ոչ էլ խորովածանոց փար բաց: Դեռ ընկանք, դեմ ընկանք, բայց ուտելու ոչինչ չգտանք. արդեն տուն պիտի վերադառնայինք սոված փորով քնելու համար, երբ նկատեցինք մի տուն, որը ընդհանուր մթության մեջ փայլում էր վառված ճրագներից: Արի մտնենք այս տունը, ասացի ես Թըրջանին, հայր տուն է, դուրս չեն անի, ի՞նչ պիտի լինի, երեկ կամ անոն-շնորհավորանք է, կամ նշանդրեք, կամ կնունք, կամ էլ հարսանիք. դու կասես

«մեծ օրնիդ շնորհավոր», ես էլ կասեմ «բարի սրհաթի, բարի պսակ առնուն»: Դուռը բաց էր և ներսը դռան մոտ կանգնած էր դռնապանը: «Ուշացանք հա», — ասացինք մենք: «Ի՛նչ կասիք, աղաներ, դեռ նոր միայն նշանը բերին» — պատասխանեց դռնապանը: Արդեն իմացանք ասելիքներս, նշանդրեք էր: Վեր բարձրացանք. դեմներս ելավ զարդարուն «լրայնոց» հագած տանտիկինը և, մեր շնորհավորանքը՝ «բարի սահաթի, բարի պսակ առնուն»-ը դեռ լրիվ չլսած, ասաց. «Ապա, ապա, աղջիկս նշանեցի, ներս համեցեք, ներս համեցեք... այս ասելով նա մեզ տարավ հանդիսականներով լի դահլիճը և «վերի թաղը» (այսինք պատվավոր տեղը) բազմեցրեց: Թե՛յ մատուցին, քաղցրավենիք, անուշ պաքսիմատ: Մեր տըրամադրությունը բացվեց, մենք պարեցինք տեղական «Օլին հավան», երգեր երգեցինք, ճառեր արտասանեցինք նորանշանների կենացի վրա, փլավ կերանք, անուշ գինի կրնեցինք, մի խոսքով լավ քեֆ արինք մինչև գիշերվա կեսը և առոք փառոք դուրս եկանք ու տուն գնացինք, հրավեր ստանալով կըրկին այցելելու. — «գեհն արեցեք, գենե», — ասում էին նրանք: Գլուխներս գինուց տաքացել էր, գնում էինք թեանցուկ ու մեղմ ձախով երգում Թիֆլիսի երգը՝ «Բեֆ սիրողին քեֆ չի պակսիլ, քեֆ արա՛, Խոնկի՛, քեֆ արա՛»:

Նոր-Նախիջևանի Թատերասիրաց Ընկերության ժողովները սովորաբար տեղի էին ունենում ամառները ակումբի ամառային շենքում, իսկ ձմեռները՝ ձմեռային շենքում, որտեղ դրա համար հատուկ առանձնացված սենյակներ կային: Ժողովներին միշտ հրավիրվում էր նաև Ադամյանը, երբ նա Նոր-Նախիջևանում կամ Ռոստովում էր լինում: Երբ ժողովի քննելիք խնդիրները սպառվում էին և նիստը հայտարարվում էր փակված, ժողովականները սովորաբար չէին ցրվում, այլ համարյա թե ամենքն էլ մնում էին սեղանի շուրջը բոլորված՝ կամ ընթերցում, կամ էլ ազատ մտերմակամ զրույցների համար, զրույցներ, որոնք դարձյալ պրտըսվում էին թատրոնի շուրջը:

Ահա հենց այդ մտերմական զրույցներն էին, որոնց Ադամյանը կենդանի, աշխույժ մասնակցություն էր ցույց տալիս. նա այնպիսի կարծիքներ էր հայտնում, այնպիսի մեջբերումներ անում, այնպիսի գիտելիքներ ցուցաբերում, որ կարող էր միայն անել թատրոնն ու նրա պատմությունը լուրջ ուսումնասիրած մի մասնագետ:

Երբեմն էլ նա ծոցից հանում էր իր նոր գրած ոտանավորներից մեկը և իրեն հատուկ վարպետությամբ արտասանում, դնելով նրա

մեջ իր շունչն ու հոգին: Մենք ծափահարում էինք և նա ուրախանում էր, կարծելով թե ոտանավորն ենք գտնում, այնինչ մենք ծափահարում էինք նրա արտասանելու վարպետությունը: Այդ բոլորը վերջանում էր նրանով, որ մենք խմբովին դուրս էինք գալիս ու մեղմ երգելով նրան ուղեկցում մինչև Ռոստով:

Ադամյանը Նոր-Նախիջևանում սիրելի բարեկամներ շատ ուներ, որոնց տներն այցելելով սիրալիք ընդունելություն ու բարոյական օժանդակություն էր գտնում, բայց ամենից շատ նա լինում էր ծերունի Սիմեոն (Սիմավոն) աղա Ալաշալյանի տանը, նրա վաղ այրիացած դուստր Օլգա Սիմեոնովնա Շահբաղյանի մոտ, որը իր զարգացմամբ, պետք է ասել, Նոր-Նախիջևանի կանաճաց մեջ ամենաառաջավորն էր: Նրանց հարաբերությունը քույր ու եղբայրական էր. Ադամյանը նրա մոտ էր քնում իր ուրախություններն ու հաջողությունները հայտնելու, իր ցավերն ու հոգսերը պատմելու, խորհուրդներ հարցնելու համար. իսկ երբ ուրիշ տեղ էր գնում, այն ժամանակ էլ այդ բոլորի մասին հեռվից նամակներով էր խոսում նրա հետ:

Այստեղ ես ուզում եմ Ադամյանի մասին մի բան պատմել, որը, գուցե, շատ շատերին տակապին հայտնի չէ: Ադամյանը, ինչպես հայտնի է, բոլոր տվյալներն ուներ սիրվելու համար, և իրոք, ուր էլ որ նա գրնում էր, կանայք ու աղջիկները սիրահարվում էին նրա վրա. նա շատ լավ գիտեր ուրիշներին սիրելի դառնալու հնարները, բայց ամուսնանալու մտադրություն չուներ. նա ասում էր, որ արտիստը մի հարաշարժ թռչուն է, այսօր այստեղ, վաղը մի ուրիշ տեղ, նա ամուսնացած է արդեն իր բեմի հետ, իր դերերի հետ:

Բայց ահա մի դեպք, որ պատահել է հենց իր, Ադամյանի հետ, գալիս է հակառակն ապացուցելու: Ռոստովի թատրոնի երգեցիկ խմբի կազմում կար մի երգչուհի՝ Եվգենիա (Ժենիա) Խախովա անունով, մի մանկահասակ, սիրունիկ ու թավռուն աղջիկ: Աղջիկը ծանոթանում է Ադամյանի հետ ու սիրահարվում, իսկ նա էլ, իր հերթին, հավանում է աղջկան. հետևանքն այն է լինում, որ նրանք սկսում են միասին ապրել, իբրև ամուսիններ: Ադամյանը շատ քմահաճույքներ ուներ, սակայն աղջիկն այնքան էր սիրում նրան, որ համբերությամբ տանում էր նրա բոլոր քմահաճույքները: Բանն այնտեղ է հասնում, որ Ադամյանը սկսում է խանդել և ազատություն դնելով փակել նրա առաջայն անգամ արդեն աղջիկն այլևս չի համբերում ու բոլորի մասին պատմում է իր եղ-



ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆ

բայրներին, իսկ սրանք էլ Ադամյանին ըստ պատեում են խայտառակի անել, եթե նա վշարունակի այդպես վարվել իրենց բրոջ հետ: Ադամյանը գալիս է Օլգա Սիմեոնովնայի մոտ ու բոլորը խոստովանում նրան: Տիկիներ, իբրև խնդր կին, խրատում է նրան և ասում.

— Ձեր արածը ազատ կենակցություն է, որ կյանքում ներկայումս հաճախ է պատահում. բայց որ դու օգտվելով այն բանից, որ նա քեզ շատ է սիրում, բռնանում ես նրա վրա, այդ ազնիվ բան չէ և դու ոտիցդուս մեղավոր ես նրա առաջ: Իմ խորհուրդն է, որ դու մի կողմ թողնելով քրմահատիկները, նամանակակալ յանդրդ ու բռնությունդ, սիրով հաշտվես նրա հետ և աշխատես հետզհետե հեռանալ, բաժանվել նրանից, թե չէ կարող է մի խայտառակություն տեղի ունենալ և սև բիծ թողնել քո մաքուր անվան վրա, որ, իհարկե, և՛ դու և՛ մենք չէինք ուզենալ:

Թե ինչով վերջացավ այս գործը, մեզ հայտնի չէ, բայց որ նա չհրապարակվեց, հասկանալի պիտի լինի, որ խաղաղությունը ու հաշտությունը է վերջացել. հավանորեն Ադամյանն ընդունել էր տիկնոջ խորհուրդները և ըստ այնմ վարվել: Այս դեպքի մասին, իր էական մասերով, գիտեին Ադամյանի մոտ գնացող-եկողները, բայց մանրամասնությունները միայն ինձ հայտնի էր, քանի որ տիկին Օլգա Սիմեոնովնա Շահբազյանը իմ կնոջ մորաքույրն էր և իմ ու նրա մեջ մի որոշ մոտիկություն ու մտերմություն կար, որի հետևանքով էլ նա չէր քաշվում Ադամյանի մասին իր իմացածներն ինձ հաղորդել:

Վերջին անգամ, 1937 թվին, երբ ես Երևանից Նոր-Նախիջևան գնացի, շատ հաճախ էի տեսնվում տիկին Օլգայի հետ — կամ ես էի գնում նրա մոտ կամ նա էր գալիս ինձ մոտ, և երկար զրույցներ էինք ունենում: Ադամյանի մասին: Տիկինը նաև նամակագրություն էր ունեցել Ադամյանի հետ, բայց դժբախտաբար նրանից ստացած նամակների մեծ մասը, ինձ անհայտ պատճառով, այրել էր արդեն. իր մոտ մնացած մի երկու նամակն էլ, Ադամյանի մի շատ սիրուն լուսանկարի հետ միասին, տվեց ինձ, որ ես բերի Երևան ու նվիրեցի Գրական թանգարանին:

Մենք հիշում ենք «Դիմակահանգես»-ի մի ներկայացումը, երբ Արթինին դերը կատարում էր Ադամյանը, իսկ Նինայի դերը՝ Օլգա Շահբազյանը: Կարծում էի, որ ռուսական այդ պիեսի ներկայացման ժամանակ Ադամյանը նույն հաջողությունը չպիտի կարողանար ունենալ, ինչ որ ունենում էր

շեքսպիրյան պիեսների ներկայացման ժամանակ: Սակայն սխալված էի, Արթինին դերում նա նույնքան հաջող էր և նույնպիսի վարպետություն ցույց տվեց, ինչ որ ցույց էր տալիս Համլետի դերում: Օլգան էլ շփշացրեց իր դերը: Այդ միակ անգամն էր, որ ես Օլգային տեսա բեմի վրա Ադամյանի հետ խաղալիս:

Ադամյանն իր ազատ ժամերին զբաղվում էր նաև նկարչությամբ. նա հաջողակ վրձին ուներ. Ռոստոմովն նկարել էր իրեն հարգող մի երկու ռոստոմյի ռուս ունևոր բարեկամների պորտրետները, վերջիններիս պատվերով ու վճարովի. մենք չենք տեսել Ադամյանի վրձինի այդ արտադրանքը, բայց տեսողները շատ էին գովում ու պատմում այն մասին, որ պատվիրողները շատ գոհ էին մնացել:

Մի օր գնացել էի Նոր-Նախիջևանի Ս. Լուսավորիչ եկեղեցու ծաղկազարդ պարտեզում հանգստանալու: Տեսա եկեղեցու արևմտյան դուռը բաց էր և ներս մտա: Տեսնեմ Ադամյանը պատկերներից մեկի առաջ կանգնած, ներկերը ձեռքին, վրձինով նկարում է: Ողջունեցի ու հետաքրքրվեցի թե ինչ է անում. ողջունյա առնելով նա պատասխանեց.

— Պետրոս անաքյալի պատկերն է, նա իմ առաքյալն է, իմ անվանակիցը, խունացել, խավարել է, վերանորոգում, ներկերը պայծառացնում եմ:

Ադամյանը իր ազատ ժամերը նվիրում էր նաև գրականությանը. նա գրել է շատ ոտանավորներ ու մի երկու էլ հակիրճ արձակ գրվածք, սակայն նրա գրիչը չի նմանվել նրա գեղեցիկ վրձինին. որքան որ նրա վրձինը գեղեցիկ ու հաջող էր, նկարչական արվեստի տեսակետից, այնքան էլ նրա գրիչը պակասավոր էր բանաստեղծական ստեղծագործության որակի տեսակետից: Նրա բազմաթիվ ոտանավորների մեջ կան և շատ թե քիչ հաջողված գործեր, բայց մեծ մասամբ նրանք անհաջող գործեր են. այդ է պատճառը, որ նրա ոտանավորների ժողովածուն, տպագրված Վենետիկի Մխիթարյան տպարանում, չի կարդացվում, կամ լավ է ասել, դժվարություն է կարդացվում:

Նոր-Նախիջևանում այդ ժամանակները դեռ քիչ կային ոչ տեղական բարրատով, այլ մաքուր լեզվով խոսողներ, դրա համար էլ հաճախ դժվար էր լինում որոշ դերերի համար կարող անձինք գտնել, քանի որ բարբառով խոսողներին իրենց դերերը սովորեցնելը կապված էր մեծ դժվարությունների հետ: Պատմում էին, որ մի անգամ, չենք հիշում թե ո՞ր պիեսի ու ո՞ր դերի համար խաղացող չի գտնվել: Ադամյանն այս մաս-

սին հայտնել է Ղուկաս Ալաջալյանին, որի պարտականութունների մեջ էր մտնում այդ մասին հոգալը: Ալաջալյանը պատասխանել է, թե սպասեք երթամ զբոսանքի այգում որոնեմ, մեկին գտնեմ ու բերեմ: Աղամյանը հազիվ ծիծաղը պահելով նկատել է.

— Ղուկաս եղբայր, ձեր զբոսանքի այգին դերասաններու արվեստանոց է, ինչ է, ես հո ամեն իշու չեմ կրնար սովորեցնել:

Ծիծաղ է բարձրացել, որին միացել է և ինքը Ալաջալյանը:

Թեմական դպրոցում ուսուցչի պաշտոն էր վարում Վահան Քիրիլյան անունով մի մարդ, մի մարտի, ազնիվ, հմուտ ուսուցիչ, լավ ընկեր, եռանդուն ու համեստ հասարակական գործիչ, Աղամյանի կազմակերպած ներկայացումներին մատնակցող շնորհալի գերասան և Աղամյանին սիրող ու պատվող անձնավորություն:

Բայց մի հանգամանք կար, որ զայրացնում էր Աղամյանին: Այդ այն էր, որ Քիրիլյանը փորձերին չէր հաճախում: Նա այդ անում էր ոչ թե դիմամբ, այլ որով-

հետև ազատ ժամանակ չէր ունենում. նա կարգում էր իր դերը, լավ սովորում և մասնակցում էր միայն վերջին փորձերին: Լավ չեմ հիշում, թե որ պիեսն էին ներկայացնում, կարծում եմ «Քին»-ը պիտի եղած լինի. Քիրիլյանն այնքան լավ խաղաց, որ Աղամյանին հավասար օվացիալի արժանացավ:

Նոր-Նախիջևանում Աղամյանի սիրելի բարեկամներն էին հանդիսանում Չախուշյան երկու եղբայրները՝ նոտար եռաշատուրը և հայտնի փաստաբան Գրիգորը, Թիթրյանը, Ղուկաս Ալաջալյանը, Թաթևու Պոպովը, հարամյանը, Մաթուլյանը, մեր հիշած Օլգա Միմենովնա Շահբաղյանը և ուրիշներ:

Այստեղ վերջացնելով մեր հուշերը Աղամյանի մասին, անհրաժեշտ ենք համարում կցել նրանց Աղամյանի 1885 թվին Ռոստովից և 1888 ու 1890 թվերին Պոլսից գրած ու հաշատուր Չախուշյանին հասցեագրած նամակներից մի քանի քաղվածքներ, որոնք, կապված լինելով մեր հուշերի հետ, լրացնում են նրանց թերին:

Քաղվածք 1.

(1885 թ. Ռոստովից)

Այն ռուս խումբը, որն որ կազմեր էի շորս կամ հինգ ներկայացումներ տալու համար, երրորդ ներկայացումից հետո ցրեցի, ահագին վնաս կրելով:

12 օրի շտի հարկով մնացի. շորս ներկայացում տվի և մեծ նեղություն ու հիվանդություն կրելուց հետո, ոչ մի ռուբլի չհանելով, ահա վեց օր կա, որ վերադարձած եմ տուն, Ռոստով: Թե հարկովում և թե այստեղ ներկա գտնվեցա Սալվինիի ներկայացմանց. տեսա կիրք, Օթելլոն և Համլետը: հարկովի մեջ բնակվում էի միևնույն պանդոկում, ուր որ ինքն էր. առիթ ունեցա շատ մոտիկից հետը ծանոթանալ, պատկերներս տվինք փոխադարձաբար: Առաջին անգամ տեսա կիրքի մեջ և, անշուշտ իտալերեն լեզվին հմուտ լինելովս և իբր արվեստագետ, ստե՛ն արյամբ դատելով, կասեմ ձեզ, որ շատ ուժեղ ձայն և կուրծք ունի, բայց երգում է... declamationi օրոնքին հպատակվելով. խաղին մեջ լավ տեղեր ունի շատ և միայն կարող է ներկայացնել ողբեր-

գական դյուցազանց ուժեղ հասակավոր դերեր...

կիրքի մեջ լավ էր, Օթելլոյի մեջ գերազանց, միայն կոստյումը սխալ էր պատմության դեմ, իսկ Համլետի մեջ...

Բոլոր ներկա եղողները՝ քիչ շատ հասկացող անձինք խորհում էին, որ եթե գազառական մի ռուս դերասան ներկայացներ Համլետը այնպես, ինչպես որ Սալվինին, անխնա կառվեին...

Երեկ երեկո ստացա մի հեռագիր Կիևից, ուր հրավիրում են ինձ 6 ներկայացման համար, երեկոն 150 ռուբլի. ամսույս 8-ին ճանապարհ կլլեմ, հոսամ Աստուծով, որ գեթ այս անգամ աշխատանքս ի դերև չիլէր:

հարկովի մեջ հայ, ռուս և հրեա ուսանողք մատուցին մի ուղերձ. (adresse) 90 ստորագրությունք և մի արձաթեղեն առարկա. այս երկուսն էլ ինձ համար սիրելի են և գին չունին:

Քաղվածք 2.

(1888 թ. Կ. Պոլսից)

Ձեզանից բաժանվելիս ի վեր բոլոր պտտած քաղաքներում ինձ պատահած արկածները այստեղ մի առ մի հիշելը երկար և ավելորդ կլինի: Անշուշտ իմացած կլինեք,

որ անցյալ ամառվա վերջերում հրավիրվեցա ի Ռոմինիա՝ թագուհու ընդառաջ ներկայացնելու մեկ երկու դրամատիքական երեկույթ, սակայն բազդի բերմամբ թագուհու-

վույն և թագավորին հիվանդանալն և Դանե-
մարքա շվեյնին ի դերև հանեց բոլոր իմ տա-
ժանելի ճանապարհորդութիւնս և հուլսերս,
արնպես որ հուսակտուր Բալզարիայից
անցնելով, մի սարսփելի ատամնացավով
տանջալ, եկա, հասա ի Պոլիս՝ տեսնելու
սիրելիքս: Եկած օրիցս 25 օր շարունակ
տանջվեցա այդ անխնայ ատամնացավով-
բժշկվելուց հետո, առաջին ներկայացումս
եղալ Օթելլոն, որն որ այնքան ընդունելու-
թյուն գտավ, որ հետզհետե հինգ անգամ
ներկայացուցի, նույնպես և Կորրադոն և
Քինը, սակայն ճամբետի և Լիրի համար
ներկայացնելու համարն չկա գրաքննիչից:
Սառա Բեռնարը այստեղից մեկնեցավ ե-
րեկվան օրը. գնացի տեսնելու իր խաղը,
և տրամադիր էի ծափահարել իրեն, սակայն,
եթե ամոթ չլիներ, խաղի միջին դուրս պիտի
ելլեի թատրոնից... մեր տիկին Շրաչան,
Միրանուշը, ռուսաց Սավինան, Երմոլովան
նրանից շատ բարձր են. նորս փառքը
միայն ռեկլամները շնորհիւ է և այլ ոչինչ:
Եթե այդ է փարիզեցոց ճաշակը... ցավալի
է. կարող եմ ապացուցանել կարծիքս ամեն
կողմերով...

Քաղվածք 3.

(1890 թ. նոյեմբ. 5 Կ. Պոլսից)

Ահա ճիշտ երկու տարի կա, որ կտառա-
պիմ զարհուրելի մը կոկորդի հիվանդու-
թյամբ. նշանավոր մասնագետ մի բժիշկ շա-
բաթը երկու անգամ վիրաբուժական գործո-
ղութիւններ կկատարե կոկորդիս մեջ, մինչ-
և կուրծքս միջից այրելով, կտրելով և այլն
և այլն. խոսելու անգամ ձայն չունիմ, որով-
հետև խոսելու գործարաններս ամբողջ մը
վերք են վերելից ի վայր: Բժշկի ու դեղի
ծախսերից ցամաքեցա, թող բարոյական
վաստակազուրկ վիճակս. հիմա լիովին
բժշկվելու համար դրամի պետք ունիմ. բը-
ժիշկս օդափոխութիւն է պատվիրո՞ւմ: Մոսկ-
վայից, Տիխիսից և Բագվից 8 ամիս առաջ
կարեկցեցան իմ վիճակին և դրամական օդ-
նութիւններ դրեցին: Իսկ Նախիջևանի մեջ,
երևի, ոչ մի բարեկամ չունիմ եղեր, անշուշտ
բացի ձեզանից և Թադեոս Պապովից, որ,
գոնե, ինձ մի ցավակցական նամակ գրե-
րուք էլ, երևի, ոչնչից տեղեկութիւն չունիք,
թե ոչ կզրեիք անշուշտ:

Դեռ առնվազն մի տարի լուսթյան դատա-
պարտված եմ, երևակայեցեք իմ դրութիւնը
ու վիճակը: Ապրուստ ու վաստակ չկա, ցավ
ու հիվանդութիւնս և անորոշ, անստույգ կա-
ցութիւնս: Եթե դիպվածով գտնվի մեկը, որ
այս գրածներուս մեջ ավելորդ մի բան

Ի՞նչ են անում տեղվույդ բարեկամներս՝
Ղ. Ալաջալյանց, Թիթրյան, Թադեոս Պապով
և այլք: Խնդրեմ տեղն ի տեղը գրեցեք ինձ,
տալով իրենց իմ սիրո և կարոտս ողջույն-
ներս:

Գրեցեք ինձ, որ գիտենամ, թե եթե հարկ լի-
նի ձեր բանկում պահեստի դրած թանկագին
իրեղեններս առնել, կարո՞ղ եմ արդյոք (եթե
անշուշտ անձամբ չկարողանամ գալ) խընդ-
րել ձեզանից, որ բարեհաճեք գրել ինձ, թե
ո՞րքան է առ - բանկն ունեցած պարտքս,
այսինքն պահեստի վճարքը, որն որ կար-
ծեմ երեսուն ռուբլի կրնե, որպեսզի ուղար-
կեմ ձեզ գումարը, որ իմ կողմից թուղթն էլ
ներկայացնելով վճարեք և ուղարկեք ինձ,
ուր հարկն է... Ասացեք պարոն Թադեոս
Պապովին, որ շատ գոհ պլտի ըլլամ և պի-
տի պատասխանեմ, եթե ինձ գրե:

Եթե տեսնեք տիկին Օլգա Շահպազյանին,
ասացեք, որ քրիստոնեական չէ այսքան եր-
կար քնն պահել մի եղբոր դեմ, թող գրե
ինձ. ես իրեն համար նուրսն եմ, ինչ որ էլ
6 տարի առաջ Նախիջևան եկած օրս:

տեսնե և հարգած լինի, եթե ոչ կյանքս, գո-
նե տաղանդս, հայնժամ կխնդրեմ նորանից,
ի սեր այդ հարգանաց, նամակով դիմել
բժշկիս և ստուգել ճշմարտութիւնը:

Այստեղ ոչ մի դրամական նպաստի աղ-
բուր կամ հույս չունիմ, ոչ ոքի էլ դիմել չեմ
ուզեր, որ շի նեղեմ, ուրեմն, մնում է ինձ
զրկվել այն արծաթեղեն ու ոսկեղեն ընծանե-
րից, որ ձեր միջոցով պահել տված եմ Նա-
խիջևանի բանկում, ուստի կխնդրեմ ձեր ան-
զուգական սիրելիութիւնից, որ բարեհաճեք
արժեցնել տալով, ծախել այդ բոլորը, և պա-
հեստի համար բանկում վճարվելիքը հատու-
ցանելով, գումարը ինձ ուղարկել. դրանում
Թադեոս Պապով բարեկամս ձեզ կօգնե, որին
խնդրեմ կարգաք նամակս և ողջունեք սիրով
իմ կողմից:

Կարծեմ այդ բանում որևէ դժվարութիւն
չի կարող լինել, քանի որ ունիք ինձանից
գրապես լիովին իշխանութիւն, որ պիտի
ներկայացնեք ում որ հարկն է, այն կվի-
տանցիայի հետ, որ բանկը տվել է ինձ:

Անշուշտ կնեքեք իմ տված նեղութիւնը,
մանավանդ երբ մտածեք, որ այդ գումարը
իմ բժշկութիւնս համար պիտի գործադրվի
և իմ վաստակի պակասը մասամբ գոնե պի-

տի լեցնել. հավատացեք, որ ուրիշ շունիմ հաստատ, բացի Աստուածմէն: Կարող եք երևակայել թե ինչ անհամբերութեամբ սպա-

սում եմ ձեր պատասխանին, որպեսզի ուղարկեմ կվիտանցիան, եթե բանկինը էլ հարկ է նամակ գրել, իմաց տվիք, որ գրեմ:

Քաղվածք 4.

(1890 թ. 2 դեկտ. 4. Պոլսից)

Մակայն մի կողմից էլ կցցավիմ, որ իզուր տեղը ձեզ ներդրելուն պատճառեցի նամակովս և դուք, ինչպես և իմ Թաղեոսը խեղճ, անսիրտ մարդկանց դիմել եք ինձ նպաստելու համար. և ինքս շատ լավ ճանաչելով նախիջևանցիին, շինդրեցի այդ ձեզանից:

Ասացեք խնդրեմ իմ սիրելի Թաղեոսին, որ շարժեր դիմել Թատերափրաց ևս ի նրա պատմ ինձ ներկայացնելու համար, որովհետև եթե նորա (որ տարակուսելի է) բարեհաճեն ներկայացնել, ժողովուրդը շերթար, եթե միայն իմանա, որ իմ օգտին համար է այդ երեկույթը: Իմ քանի մը իրավացի, բայց կրակոտ վարմունքներես վշտացած է նախիջևանցին և դեռ դժբախտաբար այնքան նորա միտքը մշակված չէ, որ իմ խոշոր հատկությանս մոտ ներելի հանդիսացնեն իմ փոքրիկ պակասությունը, մանավանդ եթե խորհելու լինի, որ իրենց հայրենակից, և օտարներին գնահատյալ, արվեստագետը այսօրվա օրս երկու նշանավոր բժշկաց վրկայություններ անօգ և լքյալ կտառապի ԸՊՊՅՈՅՈՒՆ շքոտկա, կոկորդային հյուսված կոշիած հիվանդությունը, և որ բժշկվելու համար պետք ունի դրամի և օդ փոխելու ճանապարհորդություն:

Ձեր բարեկամական առաջարկը Մշակին գրելու մասին ավելորդ կհամարեմ, չէի սու-

գեր, որ այդ մարդը (Արծրունին), որին կհամարեմ, ձեր միջոցով անուղղակի ուզած օգնությունը մտքեն անցնի, թե իր հոգեւյանին օրը ուղարկած բանաստեղծությանս համար փոխարենը պահանջած լինիմ: Ահա միմիայն այս տեսակետով չէի փափագեր, որ դրեք իրեն:

Իրավունք ունեք, որ այդ իրեղենները ծախժխելով, մեծ բան մը շինք կարող ձեռք անցնել, ուստի մնում է միայն վիճակահանություն ղենելու գաղափարը, որ, գուցե, կարելի լինի իրագործել, եթե ազդու անձի մը ձեռք վիճակս բացատրվի ոռւս ստեղծանության և առանձնաշնորհաբար հրաման խնդրվի նոցանից. չեմ հուսար որ մերժեն, եթե տեղյակ լինին ճշմարտության: Եվ այդ ճշմարտությունը կարող են իմանալ դիմելով ոռւսաց դեսպանատան թարգման պարոն Վլադիմիր Մայկովին, որդի Մայկով բանաստեղծին, որի հասցեով և միջոցով սրանից 8 ամիս առաջ 170 ուրբլի ուղարկել էին ինձ հօդնություն ոռւսք քանի մը Թատերասերք, իմանալով իմ դրությունը: Ինչ էլ որ պատահի, խնդրում եմ գրեք ինձ, վստահ լինելով, որ ձեր նամակները միխթարական և սիրելի են ինձ համար: Սույնը կխնդրեմ իմ անզուգական Թաղեոսից, սրտագին ողջունենրս մատուցանելով իրեն:

Այս քաղվածքները հանել ենք Արամյանի նամակների բնագրերի մեր ընդօրինակած նմուշներից, փոփոխելով ուղղագրությունը, անկանոն կետագրությունը և հատուկ անունների արևմտահայ արտասանությունը. միաժամանակ ուղղել ենք նկատված վրիպակները, պահպանելով նամակների բուն կառուցվածքը:

Այս փոփոխությունները մենք անհրաժեշտ ենք համարել կատարել, նրանց բովանդակությունը մեր ընթերցողների համար դուրսմբունելի դարձնելու նպատակով: Նամակները, գրված լինելով Արամյանի զարհուրե-

լի հիվանդության օրերին, իրենցից ներկայացնում են արևմտահայ ու արևելահայ լեզուների մի խառնուրդ. գրված են նրանք շտապ ու խառնուրդով: Բերված քաղվածքները լրացնում են մեր հուշերը, բացի ներանց մեջ շորափված մի կարևոր խնդրից, որը մեզ համար տակավին մնում է չպարզված—գա նրա ստացած ընծաների խնդիրն է: Արամյանը գրում է, որ դրանք տրված են եղել բանկին պահելու համար և չի հիշում, որ դրա փոխարեն ինքը բանկից վերցրել է 500 ուրբլի: Այս խնդիրը կպարզվի, եթե մի օր գտնվի այն կվիտանցիան, որի մասին հիշում է Արամյանն իր նամակում:

